


# Եսայի կաթողիկոսի «դավաճանության» և «ինքնասպանության» մասին

Այվազյան Արմեն Մ.

պ. գ. թ., ք. գ. դ., ավագ գիտաշխատող, «Մատենադարան» Մերույ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ (Երևան, ՀՀ)

 <https://orcid.org/0009-0003-2724-7695>  
[armenayvazyan@gmail.com](mailto:armenayvazyan@gmail.com)

ՀՏԳ՝ 94 (479.25, 55); EDN: MDIBYI

DOI: 10.58587/18292437-2025.2-84

**Հանգուցարաներ և բառակապակցություններ՝** Եսայի Հասան-Չալալյան, Գանձասարի կաթողիկոս, հայ ազատագրական շարժում, Ղարաբաղի Մղնախներ, Օսմանյան կայսրություն, հետախուզական գործունեություն, հոգևոր իշխանության, հին ռուսերենի բառագիտություն

## О «предательстве» и «самоубийстве» католикоса Есаи

Айвазян Армен М.

к.и.н., д.п.н., старший научный сотрудник, «Матенадаран» — Научно-исследовательский институт древних рукописей имени Месропа Маштоца (Ереван, РА)

**Аннотация.** Жизнь и деятельность Гандзасарского католикоса Есаи Гасан-Джалаляна (ум. в 1728 г.), оставаясь недостаточно изученными, подчас подвергались искаженной интерпретации. В ряде работ ему приписывается предательство целей и военачальников армянского национально-освободительного движения, а также совершение самоубийства. В настоящей статье на основе исторических источников аргументированно опровергаются оба обвинения как ошибочные и лишённые фактической основы. Показано, что католикос Есаи до конца своей жизни оставался последовательно верен делу освобождения и тесно сотрудничал с военным руководством карабахских Сагнаков. Его декларативное признание османского сюзеренитета в 1726 г. было продиктовано стремлением обеспечить безопасность армянского населения, находившегося под его духовной властью. В то же время он осуществлял активную разведывательную деятельность в пользу армянских войск, вплоть до пребывания в штабе османского командования.

Утверждение о его самоубийстве возникло в результате неверного толкования выражения «живот свой окончал / скончал», которое в старорусском языке означало «скончался», но никоим образом не «покончил с собой».

**Ключевые слова и словосочетания:** Есаи Гасан-Джалалян, Гандзасарский католикос, армянское освободительное движение, карабахские Сагнаки, Османская империя, разведывательная деятельность, духовная власть, лексикология старорусского языка

## On the “Betrayal” and “Suicide” of Catholicos Esayi

Ayvazyan Armen M.

Doctor of Political Science,

“Matenadaran” Mesrop Mashtots Scientific Research Institute of Ancient Manuscripts (Yerevan, RA)

**Abstract.** Despite their historical significance, the life and activities of Yesai Hasan-Jalalyan, Catholicos of Gandzasar (d. 1728), have remained insufficiently studied and at times misinterpreted. Several historians have accused him of betraying the goals and commanders of the Armenian national liberation movement, as well as of committing suicide. Drawing on historical sources, this article refutes both allegations as erroneous and devoid of factual basis. It demonstrates that Catholicos Yesai remained steadfastly loyal to the liberation cause until his death and maintained close cooperation with the military leadership of the Karabakh Sagnaks. His formal acknowledgment of Ottoman suzerainty in 1726 was motivated by a desire to ensure the safety of the Armenian population under his spiritual authority and was accompanied by secret intelligence work in support of the Armenian forces — even from within the headquarters of the Ottoman military command.

The claim that he committed suicide arose from a misinterpretation of the expression *zhivot svoy okonchal / skonchal* (“живот свой окончал / скончал”), which in Old Russian meant “passed away” and never denoted an act of suicide.

**Keywords & phrases:** Esayi Hasan-Jalalyan, Catholicos of Gandzasar, Armenian liberation movement, Karabakh Sagnaks, Ottoman Empire, intelligence activities, spiritual authority, Old Russian lexicology

Պատմագիտական գրականության մեջ Գանձասարի կաթողիկոս Եսայի Հասան-Չալալյանի (մահ՝ 1728 թ.) կյանքն ու գործունեությունը

միշտ չէ, որ արժանացել են արդար գնահատականի: Որոշ հեղինակներ նրան ամբաստանել են ազատագրական շարժման նպատակներին ու

գործիչներին դավանանելու, ինչպես նաև ինքնասպանություն գործելու մեջ: Մակայն, ինչպես ցույց կտրվի ստորև, այս երկու մեղադրանքներն էլ սխալ և անհիմն են:

**Եսայի կաթողիկոսի «դավանանության» մասին**

1726 թ. նոյեմբերի 15-23-ին Շուշիի վրա օսմանյան բանակի հարձակման ընթացքում<sup>1</sup> Ղարաբաղի մելիքներից մի քանիսը, Եսայի կաթողիկոսի գլխավորությամբ, ձևական և ժամանակավոր կերպով դուրս եկան հայոց դիմադրական ճակատից՝ արտաքուստ միանալով օսմանցիներին: Այդ մասին նշվում է 1726 թ. նոյեմբերի վերջին կամ դեկտեմբերի սկզբին գրված մի նամակում, որը կրում է Ավան և Օհան յուզբաշիների կնիքները:

«Ղարաբաղից յուրերն այսպիսին են. 1726 թ. նոյեմբերի 15-ին [Սարի-Մուստաֆա] սերապերը Շամախիից եկավ Պարտավ (Բարդա): [Այնուհետև] Եսայի հոգևոր Տերը՝ Ղարաբաղի բոլոր մելիքների և գյուղապետների հետ միասին, գնացին Պարտավ սերապերին հպատակություն հայտնելու: Սերապերին վերցրեցին և արշավեցին Ավան-յուզբաշու և Օհան-յուզբաշու ամրոցի՝ Շոշի վրա. 8 օր կռվեցին թնդանոթներով ու հրասանդներով: Ամրոցի կեսը գրավեցին, բայց դրանից ավել առաջանալ չկարողացան»:

[«Այս է Ղարայպաղին խապարն. ՌՃՀԵ (1726) թվին, նոյրնբերի ԺԵ (15) էր, որ սարասկարն Շամախու եկաւ Պարդայ, Եսայի հոգևոր տէրն քուլ Ղարայպաղի մելիքներովն և քայթուղովն գնացին Պարդայ սարասկարին դանշար: Սարասկարն վեր կարան եկին Շօշու՝ Ավան ուզպաշին և Ոյհան ուզպաշին դալեն վերայ. Ը (8) օր կռիւ արին թօփով (=հրետանիով) և դօ[ւ]բարով (դումբարա = հրասանդ): Բարին մինչև կէսն կարան. էլ սւել չի կարացին գնալ»:] [10, վավ. 346, էջ 286. հմմտ. վավ. 350, էջ 291]<sup>2</sup>:

<sup>1</sup> 1726 թ. նոյեմբերի 15-ին սերասկյար Սարի-Մուստաֆա փաշայի գլխավորած օսմանյան բանակը և նրան միացած Կովկասյան սուլունի լեռնցիները (Հաջի Դավութի և Ահմադ-խանի առաջնորդությամբ) ընդհանուր 40,000 զինվոր, Շամախիից արշավելով՝ Բարդայի և Գանձակի վրայով մտել են Արցախ և հասել Շուշի, որտեղ դրանից չորս տարի առաջ ամրացել էր և առաջին մեծ բերդը կառուցել Արցախի սպասամբ հայոց զինուժի գլխավոր հրամանատար, ծնունդով շիրվանցի Ավան-յուզբաշին (Ավան-խանը): Շուշիի տակ ճակատամարտը տևել է ութ օր՝ մինչև նոյեմբերի 23-ը, որից հետո Սարի-Մուստաֆա փաշայի վիթխարի բանակը հապշտապ նահանջել է Գանձակ: Նահանջը տեղի է ունեցել այն բանից հետո, երբ օսմանյան բանակից սպանվել է 800 հոգի, ներառյալ երկու բարձրաստիճան գորավար: Հենց այս երկուսի սպանվելուց հետո էլ սերասկյար Սարի-Մուստաֆա փաշան, բազմակողմանիորեն գնահատելով իր բանակի համար ստեղծված ծանր դրությունը, գիշերվա քողի ներքո թաքուն լքել է իր ճամբարը և ճողոպրել Գանձակ՝ ըստ մեր աղբյուրներից մեկի դիպուկ բնորոշմամբ՝ «անցնելով երկու օրվա ճանապարհը մեկ օրում»: Շուշիի ճակատամարտի մասին տեղեկությունները բերված են 1726 թ. նոյեմբերի

Նույն նամակի համաձայն՝ Եսայի կաթողիկոսը հավաքել էր Ղարաբաղի մելիքներին ու գյուղապետներին, կազմել զորք և դուրս եկել Ավան-յուզբաշու դեմ՝ հայտարարելով, թե այսուհետև իրենց այդ խմբավորումը իբր ենթարկվելու է օսմանցիներին, քանի որ ռուսները, օգնության գալու կեղծ խոստումներով, արդեն չորս տարի շարունակ խաբում են հայերին [10, էջ 286-287]: Այս տեղեկությունների հիման վրա Պ. Հարությունյանը Եսայի Հասան-Ջալալյանին մեղադրել է դավանանության մեջ, իսկ Ա. Հովհաննիսյանը՝ «Հայաստանի ազատության կատաղի թշնամիների առջև անձնատվության» [13, էջ 233-234; 9, էջ LXXXVIII; 4, էջ 159]: Ֆ. Պողոսյանն ու Չ. Արզումանյանը վիճարկել են այդ անիրավացի գնահատականները՝ ներկայացնելով մի շարք պատմական փաստեր ու փաստարկներ [6, էջ 30-36; 3, էջ 50-57]:

Ֆ. Պողոսյանը, մասնավորապես, իրավացիորեն նկատում է, որ 1726 թ. երկրորդ կեսին Սղնախների «ղեկավարների մեծ մասը, այդ թվում նաև Եսայի Հասան Ջալալյանը, ելնելով ստեղծված ծանր կացությունից, բնակչությանը մասսայական կոտորածից ու գերեվարումից և երկիրը հրի ու սրի մատնելուց փրկելու նպատակով, ինչպես նաև հուսալով, որ բարենպաստ պայմանների առկայության դեպքում Ռուսաստանը Անդրկովկասում կդիմի եռանդուն գործողությունների, որոշեցին առերես ընդունել թուրքական հրամանատարության պահանջները և մնալ Ղարաբաղում» [6, էջ 35]: Արձանագրելով, որ 1726 թ. Հայոց Սղնախների իրավիճակը կտրուկ ծանրացել էր<sup>3</sup>, Ֆ. Պողոսյանը, սակայն, այդ պահից ի վեր Ավան-յուզբաշուն անհիմն վերագրում է Ղարաբաղից իբր ընդմիշտ հեռանալու ցանկություն [6, էջ 35-36]: Սա պատմական իրա-

վերջերին կամ դեկտեմբերին Ղարաբաղում շարադրված վավերագրերում [10, վավ. 346, էջ 350], ինչպես նաև ավելի ուշ՝ 1727 թ. հունիսի 19-ին Ղարաբաղից Ռուսաստանի մայրաքաղաք հասած հայոց զորքի պատվիրակների հայտարարություններում [10, վավ. 356]:

<sup>2</sup> Պետք է նշել, որ APO-II ժողովոծումում 346-րդ վավերագրի 1726 թ. նոյեմբերի 15-ով թվագրումը սխալ է, քանի որ այնտեղ ներկայացված են ոչ միայն նույն օրը մեկնարկված ճակատամարտի ութօրյա ընթացքն ու ավարտը, այլև դրա ռազմաքաղաքական հետևանքները: Հետևաբար, փաստաթուղթը գրվել է նոյեմբերի վերջին կամ դեկտեմբերին:

<sup>3</sup> 1726 թ. սկզբից օսմանյան բանակները լիովին շրջապատել էին Ղարաբաղի և Ղափանի հայոց իշխանապետությունները: 1724 թ. հունիսի 12-ի ռուս-թուրքական պայմանագրով Արևելյան Հայաստանի ամբողջ տարածքն ընդգրկվել էր Օսմանյան կայսրության կազմում: 1726 թ. ամռանը ռուսական մերձկասպյան զորաբանակի հրամանատարությունը, արդեն տեղում հանդիպելով Սարի-Մուստաֆա փաշային, օսմանցիների հետ համատեղ ձեռնարկեց սահմանազգծման գործընթաց:

կանությանը չհամապատասխանող գնահատական է թեկուզ միայն այն պատճառով, որ Ավանն ու նրա զինակիցները դրանից հետո ավելի քան երկու տարի շարունակել են ուժգին և արդյունավետ զինված դիմադրություն ցույց տալ օսմանյան զավթիչներին, տոնել նոր հաղթանակներ և դուրս են եկել Ղարաբաղից միայն 1728 թ. դեկտեմբերին կամ 1729 թ. հունվարին (այլ ոչ՝ ինչպես կարծում է Ֆ. Պողոսյանը, «1728 թ. սկզբներին»), այն էլ՝ շուտով վերադառնալու մտադրությամբ<sup>4</sup>: Ֆ. Պողոսյանի վերոբերյալ գնահատականում ճիշտն այն է, որ Եսայի Հասան-Ջալալյանն ու հայ որոշ գործիչներ միայն առերես էին հպատակվել օսմանցիներին:

2. Արգունանյանը, ներկայացնելով պատմական փաստերի վրա հիմնված մի շարք նոր դիտարկումներ, ևս շեշտում է Եսայի կաթողիկոսի և Գյուլիստան ու Ջրաբերդ հյուսիսային Սղնախների ղեկավարների օսմանցիներին ընդամենը ձևականորեն հպատակվելու համաձայնությունը. «Եսայի Հասան Ջալալյանը, որն անշուշտ շահագրգռված էր զինված պայքարը շարունակելու հարցում, ստեղծված իրավիճակում վարվեց հետևյալ կերպ. առերես արտահայտելով «թուրքահպատակություն», նա մի կողմից երաշխավորեց անպաշտպան ժողովրդի ֆիզիկական ապահովությունը, մյուս կողմից՝ պայքարի դրոշը չխոնարհած սղնախների համար պայքարը շարունակելու հնարավորություններ ստեղծեց» [3, էջ 53-54]: Միաժամանակ 2. Արգունանյանը հիմնավոր կասկածի տակ է առնում վերոհիշյալ նամակում պարունակվող այն տեղեկությունների ճշմարտացիությունը, ըստ որոնց Եսայի կաթողիկոսը և, իբր, բոլոր հայ մելիքներն անցել էին օսմանցիների կողմը [3, էջ 55-56]:

Այսուհանդերձ, հետազոտողների ուշադրությունից վրիպել է ամենաէական պատմական տեղեկությունը, որը միանշանակ հերքում է 1726 թ. աշնանը Եսայի կաթողիկոսի և հայ մելիքների թշնամու կողմն անցնելու մասին պնդումները:

1726 թ. նոյեմբերի 15-23-ին տեղի ունեցած Ծուշիի ճակատամարտից *ընդամենը մեկ ամիս անց* նույն Եսայի կաթողիկոսը, Երից Մանկանց Ներսես կաթողիկոսը և Ղարաբաղի *բոլոր մելիքները* կրկին համախմբվեցին և միացան Ավան-

յուզբաշու գլխավորությամբ գործող ազատագրական ճամբարին: Նրանք համատեղ որոշեցին «Հայոց գորքի» կամ «Հայոց Սղնախների» անունից<sup>5</sup> նոր պատվիրակություն ուղարկել ռուսաց արքունիք՝ ռազմական օգնություն հայցելու առաքելությամբ: Պատվիրակության ղեկավար Բաղի-յուզբաշին այս կապակցությամբ ռուս պաշտոնյաներին հայտնել էր հետևյալը (նրա խոսքը ռուսերեն փաստաթղթում ներկայացված է երրորդ դեմքով).

«...նրանց Նորին կայսերական մեծության մոտ ուղարկել են Հայոց Չորածողովի (իմա՝ Հայոց Սղնախների – Ա.Ա.) պատրիարքները և այլ հոգևորականներ, ինչպես նաև *յուզբաշիները* (իմա՝ հայոց գորքի հրամանատարությունը – Ա.Ա.), մելիքներն ու Չորածողովում բնակվող մյուս նշանավոր անձինք... Նրանք ճակատամարտել են Գանձակում նստող սերասքեր Սարի-Մուստաֆա փաշայի և Հաջի Դաուդ-բեկի եղբայր Ահմադ խանի դեմ, որոնք 40,000-անոց բանակով հարձակվել էին նրանց վրա: Եվ ութ օր մարտնչելով՝ Նորին կայսերական մեծության հաջողությամբ սպանել են ենիչերիների հրամանատարին ու *ղախաշնապաշային*, ինչպես նաև շատ ուրիշների՝ նրանց հետո քշելով իրենց բնակավայրերից: Օսմանյան բանակը նահանջել է դեպի Գանձակ: *Այդ ճակատամարտից մեկ ամիս անց* Հայոց Չորածողովն իրենց՝ *յուզբաշիներին*, 26 այլ անձանց հետ միասին, ուղարկել է Սալիան<sup>6</sup> ռուս զեներայ, իշխան Վասիլի Վլադիմիրի Դոլգորուկովից [ռազմական] օգնություն խնդրելու» (ընդգծումը՝ Ա.Ա.):

[«...послали их к Ея Императорскому Величеству Армянского Собрании патриархи и прочие духовные, також юзбаши, мелики и прочие свецкие особы, которые в том Собрании обретаются... ..имели они баталию с генжинским сераскером Сары Мустафою нашею, Аджи Даудбековым братом Ахмат ханом, которые к ним приходили с 40,000 человеки войною, и бились с ними восмеры сутки, и Ея Императорского Величества щастием из оных энгичар агасы и кырчаша агасы и других немало число побили и отбили от их жилищ прочь, которые паки пошли в Генжу. А после той баталии, месяц спустя, Армянское Собрание послали их, юзбашей, и прочих 26 человек просить о помощи к генералу князю Василью Володимировичу Долгорукову в Сальян.»] [10, վավ. 356, էջ 296]:

<sup>4</sup> Սղնախներ վերադառնալու՝ Ավան և Թարխան յուզբաշիների նպատակներն ու ծրագրերը ներկայացված են առաջիկայում հրատարակվելիք մեր հետևյալ մենագրությունում՝ «Հայոց գորքն Արցախում 1722-1735 թվականներին (կազմավորումը, զինումը և ճակատամարտերը)» «Ավան-յուզբաշու գործունեությունն ու նպատակները Ռուսաստանում» ենթագլխում:

<sup>5</sup> Ռուսերեն վավերագրում «Армянское Собрание», որը «Собрание Армянского Войска»-ի համառոտագրությունն էր և «Հայոց Սղնախներ» պետականանշան եզրույթի հոմանիշներից մեկը [2, էջ 271]:

<sup>6</sup> Խոսքն այս դեպքում, ամենայն հավանականությամբ, վերաբերում է Սալյան (Сальяны) ամրոցին, որը Բարվից ճանապարհով մոտ 140 կմ (ուղիղ գծով՝ 117 կմ) դեպի հարավարևմուտք ընկած կարևոր առաջադիր ամրակետ էր Կուրի աջափնյակում: 1723-1735 թթ. այն գրավված էր ռուսական մերձկասպյան զորաբանակի կողմից: Այս Սալյանը չպետք է շփոթել Ծիրվան նահանգի Սաղիան հայկական գյուղի հետ [2, էջ 65], որը գտնվում էր Ծամախիից 5 կմ հեռավորության վրա [10, էջ 346, ծնթ. 122] ու որի Ս. Ստեփանոս եկեղեցին հաճախ էր ապահով հանգրվան ծառայում Հայոց Սղնախներ գաղտնաբար գնացող-եկող սուրհանդակների ու պատվիրակների համար (տե՛ս, օրինակ, 10, վավ. 204, էջ 61):

Այս փաստաթղթում ոչ միայն չկա որևէ հիշատակություն Եսայի և Ներսես կաթողիկոսների կամ մելիքներից որևէ մեկի թշնամու կողմն անցնելու մասին, այլև պարզ նշվում է, որ 1726 թ. նոյեմբերյան մարտերի ընթացքում Ղարաբաղի Սդնախները միասնական ճակատով են պայքարել օսմանյան ներխուժման դեմ, թեև խոսքն այստեղ հայկական ընդհանուր բանակով օսմանյան ներխուժմանը դիմադրելուն չի վերաբերում:

Բոլոր տեղեկությունները համադրելուց հետո 1726 թ. աշնանը ստեղծված խրթին պատմական իրադրությունը պատկերվում է հետևյալ կերպ: Թեև նոյեմբերի 15-23-ին Շուշիի ճակատամարտին անմիջականորեն մասնակցել է միայն Ավան-յուզբաշու գործը, Ղարաբաղում եղած հայոց մյուս զինական ուժերն այդ ընթացքում ամրացած են մնացել իրենց սղնախներում՝ ուշադիր հետևելով օսմանյան բանակի շարժումներին և պատրաստ լինելով, անհրաժեշտության դեպքում, դիմելու նույնախի վճռական ինքնապաշտպանության կամ հակահարձակողական գործողությունների: Բնութագրական է, որ Շուշիի ճակատամարտին ուղղակիորեն չի մասնակցել անգամ Ավան-յուզբաշու հրամանատարության տակ գործող զինուժի զգալի մասը, մասնավորապես Թարխան-յուզբաշու Խաչենում տեղակայված մարտունակ զորախումբը: Այս փաստը վկայում է, որ Ղարաբաղի Սդնախների ղեկավարները, ներառյալ բոլոր մելիքները, առաջնորդվել են հետևյալ միասնական ռազմավարական պլանով՝ անառիկ Շուշիի պարիսպների տակ կատաղի կռիվներում ջլատել օսմանյան բանակի ուժերը, հետագա դիմադրության համար առավելագույնս պահպանել հայոց զորաքանակն ու կյուրական ռեսուրսները, հնարավորինս գերծ պահել երկիրը ավերումից ու գերեվարումից, ի վերջո՝ ստիպել Սարի-Մուստաֆա փաշային հեռանալ Ղարաբաղից: Այդ նույն տրամաբանությանը համապատասխան էլ պետք է դիտարկել որոշ սղնախների (մասնավորապես՝ Գյուլիստանի և Ջրաբերդի) Սարի-Մուստաֆային տրված դատարկ հավաստիացումներն օսմանյան իշխանությանը հպատակվելու վերաբերյալ: Եվ ամենակարևորն այն է, որ, ինչպես կպարզաբանվի հաջորդիվ, **թե՛ Ավան-յուզբաշու շիրվանցի զորագլուխներն ու Ղարաբաղի մելիքների մեծ մասը, և թե՛**

<sup>7</sup> [7, վավ. 6, թ. 1056-106a. հմմտ. 11, վավ. 103, էջ 140: Այս հատվածի մի մասը կարելի է ընթերցել նաև փոքր-ինչ այլ կերպ. «...նրանց բոլորի դիմադրությունն [օսմանցիներին] ղեկավարվում էր Եսայի կաթողիկոսի խելքով ու [հայրական] խրատներով...»: Սրանով հիմնական իմաստը չի փոխվում, քանի որ դարձյալ արձանագրվում է Ղարաբաղում հայկական ուժերի համախմբվածությունը՝ Եսայու կաթողիկոսի երբեմն ուղղակի, երբեմն էլ անուղղակի քաղաքական ու հոգևոր առաջնորդությամբ: Չ. Արզումանյանը միայն մասամբ է վերաշարադրել ու թարգմանել այս կարևոր հաստ-

**Գյուլիստանում Ջրաբերդում իշխող մելիքները գործել են օսմանյան բանակի շտաբ ներթափանցած Եսայի կաթողիկոսի գաղտնի ուղղորդմամբ ու ցուցումներով:**

Այսպիսով, 1726 թ. երկրորդ կեսին Եսայի կաթողիկոսն օսմանցիներին հպատակություն էր հայտնել միայն առերես, իսկ իրականում նա ծածուկ համագործակցում էր ինչպես զավթիչներին բացահայտ դիմադրություն ցույց տվող Ավան-յուզբաշու և նրա զինակիցների, այնպես էլ Սդնախների մյուս բոլոր ղեկավար գործիչների հետ: Ավելին, նա գաղտնաբար համակարգում էր Ավան-յուզբաշու գլխավորությամբ գործող բազմաքանակ զորքերի և Ղարաբաղի հայկական մյուս (մելիքական) զինյալ ուժերի գործունեությունը: Այդ մասին ուղիղ ասվում է 1728 թ. դեկտեմբերի 16-ին Մերձկասայան շրջանում ծառայության անցած մեկ ուրիշ ռուս զորավար՝ գեներալ-լեյտենանտ Ա. Ի. Ռումյանցևի (1680-1749)՝ իշխան Վ. Վ. Դոլգորուկովին (1667-1742) գրած նամակում (հայերեն թարգմանությունն իրականացվել է՝ հաշվի առնելով ինչպես XVIII դարի գործածական ռուսերենի լեզվական առանձնահատկությունները, այնպես էլ տվյալ պատմական իրադրության համատեքստը).

«Միանգամայն պարզ է, ողորմա՛ծ տեր, որ նրանք բոլորը (իմա՝ Ավան-յուզբաշին և նրա զինակիցները – Ա.Ա.) պահպանում էին իրենց միասնությունը Եսայի կաթողիկոսի [սուր] մտքի ու ցուցումների շնորհիվ: Ու թեև նա (Եսայի կաթողիկոսը) գտնվում էր [օսմանցի] փաշայի մոտ, բայց նայնպես գաղտնաբար շարունակել էր նրանց ուղղություն և խորհուրդներ տալը: Իսկ երբ նա մահացավ, նրանք բոլորն այլ ուղիներ բռնեցին...»:

[«...И можно, милостивый государь, видеть, что они держались все умом и наставлением патриарха Исая, который нынешним летом умер, и хотя он при нас был, токмо тайными наставлениями их не оставлял. А как он умре, то они все иные меры взяли...».]<sup>7</sup>

Ա. Ի. Ռումյանցևի այս նկատողության կապակցությամբ Չ. Արզումանյանն իրավամբ նկատել է, որ իշխան Դոլգորուկովն «այդպիսի բարձր գնահատական չէր տա Եսայի կաթողիկոսին՝ ընդհուպ մինչև իր մահը՝ 1728 թ. ամառը սղնախների ազատագրական անգիջում պայքարը ղեկավարելու ասպարեզում, եթե 1726 թ.

վաճը՝ հիմնականում ճիշտ, սակայն ոչ ամբողջությամբ ճշգրիտ ներկայացնելով դրա իմաստային բովանդակությունը. «Վ. Դոլգորուկովը մասնավորապես շեշտում է իր նկատառումները սղնախներում հակաթոքական պայքարի համառության և տևականության մասին ուղղակի նշելով «որ նրանք (հայերը — Չ. Ա.) դիմացել են միայն իրենց կաթողիկոս Եսայու խելքի ու պատվիրանների շնորհիվ, որն անցած ամռանը (1728 թ. ամռանը—Չ. Ա.) վախճանվեց» [3, էջ 54]:

թուրքական «փաշայի մոտ գտնվող» կաթողիկոսը իսկապես իր կապերը խզած լինելը պայքարող սղնախների ղեկավարների հետ և նպաստած չլինելը այդ պայքարին» [3, էջ 54]:

Սակայն Ավան-յուզբաշուն «գաղտնաբար ուղղություն և խորհուրդներ տալը» («тайными наставлениями их не оставлял») իրականում ավելի բովանդակալից պատմական հաղորդում է: Սա նշանակում է, որ Եսայի կաթողիկոսն Ավան-յուզբաշուն և նրա մերձավոր զինակիցներին օպերատիվ ու գաղտնի կերպով փոխանցել է ոչ միայն օսմանյան բանակի հրամանատարության հետ ունեցած շփումների շնորհիվ իրեն հասանելի դարձած ռազմական և այլ կարևոր տեղեկությունները, այլև դրանց հիման վրա կատարած իր ռազմավարական վերլուծությունները՝ համապատասխան գնահատականներով և խորհուրդներով հանդերձ: Այլ կերպ ասած, Եսայի կաթողիկոսն անձամբ և գիտակցաբար ստանձնել է վտանգավոր հետախուզական առաքելություն՝ լինելով նախկինում (1699–1701 թթ.-ից մինչև 1722 թ.) հայ ազատագրական շարժման՝ տարբեր երկրներում ներդրած-հաստատած գաղտնի գործակալական ցանցի ղեկավարներից մեկը, եթե ոչ հենց դրա անմիջական «պետը»<sup>8</sup>:

Եսայի կաթողիկոսի՝ Ղարաբաղի Սղնախների հայ ռազմական առաջնորդների հետ մշտապես սերտ համագործակցության մասին 1736 թ. մարտին գրել է նաև Իսրայել Օրու զինակիցը և Ռուսաստանում հայ ազատագրական շարժման ներկայացուցիչ Մինաս վարդապետ Տիգրանյանը (1658–1740)՝ նույնիսկ 1728 թ. Ավան, Թարխան և Բաղի յուզբաշիների՝ Սղնախներից հեռանալը բացատրելով Գանձասարի կաթողիկոսի մահվամբ.

«Երբ [Եսայի] պատրիարքը մահացավ, այնտեղի (իմա՝ Սղնախների – Ա.Ա.) բնակիչները մնացին առանց ղեկավարի և փորձառու առաջնորդի, այդ պատճառով էլ երեք գորագույնները՝ Ավան-յուզբաշին, Թարխան-յուզբաշին, Բաղի-յուզբաշին, ինչպես նաև Ռուսաստանից նրանց մոտ ուղարկված պատվիրակ [Իվան] Կարապետը, ով ապրում էր նրանց տիրույթում, միասին դուրս եկան [Սղնախներից] և եկան Նիզովոյ»<sup>9</sup>:

[«И как патриарх умер, тамошние обыватели без начальника и доброго предводителя остались, по [этой] причине три старшины Иван юсбаши и Тархан юсбаши, и Багий юсбаши, и из России

которой послан к ним курьер Карабет, и был у них и взыв их, выехали в Низово.»] [17, վավ. 305, էջ 460]<sup>10</sup>.

Այսպիսով, Եսայի կաթողիկոսը մինչև իր մահը մնաց լիովին նվիրված հայ ազատագրական շարժմանը և Սղնախների ռազմական ղեկավարությանը: Օսմանցիներին նրա հայտնած ենթակայությունը զուտ ձևական բնույթ ուներ և միտված էր իր հոգևոր իշխանության ներքո գտնվող հայ բնակչության անվտանգությունը հնարավորինս ապահովելուն, մինչդեռ ինքն իրականացնում էր հետախուզական գործունեություն՝ փաստորեն օսմանյան ռազմական հրամանատարության շտաբում: Հետևաբար, նրա «ղավաճանության» և «անձնատրության» մասին կարծիքները պատմական իրականության հետ որևէ կապ չունեն և հիմնովին սխալ են:

### **Եսայի կաթողիկոսի «ինքնասպան լինելու» մասին**

Շրջանառության մեջ է դրվել ևս մեկ անհիմն կարծիք, թե իբր Եսայի Հասան-Ջալալյանն «ինքնասպան է եղել», որովհետև «պայքարը շարունակելու կողմնակիցները նրան մեղադրել են դավաճանության և խաբեության մեջ» [5, էջ 102]: Ինչպես այլ առիթով նշել ենք, պատմական աղբյուրներում չկա գեթ մեկ տեղեկություն, որը հաստատեր Եսայի կաթողիկոսի «ինքնասպանությունը» [2, էջ 313-314]: Ընդհակառակը, Ա. Ի. Ռումյանցևի 1728 թ. դեկտեմբերի 16-ի նամակի վերոբերյալ մեջբերումից պարզվում է, որ կաթողիկոսը մահացել է բնական ճանապարհով, իսկ հիշատակված տվյալը առավել որոշակիացնում է մահվան ժամանակը՝ 1728 թ. ամառ («...այս ամռանը մահացած Եսայի կաթողիկոսի...», «...երբ նա մահացավ...»): Գեներալ Ռումյանցևը միանշանակ և հստակ նշում է, որ Եսայի կաթողիկոսը մահացել է բնական պատճառներով: Վերը մեջբերվեց նաև Մինաս վարդապետ Տիգրանյանի հստակ դիտարկումը. «Երբ [Եսայի] պատրիարքը մահացավ...» [«И как патриарх умер...»]:

Ի վերջո, Եսայի Հասան-Ջալալյանը հավատացյալ քրիստոնյա էր, ավելին՝ Գանձասարի կաթողիկոս, և ինքնասպանությունը նրա համար հանդիսանում էր մեծագույն ու աններելի մեղք: Ընդհանուր առմամբ, մեզ հայտնի չեն դեպքեր, երբ վաղ կամ ուշ միջնադարում հայ հոգևորա-

<sup>8</sup> 1720-ական թթ. սկզբին հայկական ռազմականացված հետախուզական ցանցը գործել է Ռեչ Պոսպոլիտայում, Օսմանյան կայսրությունում (ներառյալ Դրիմում), Սեֆյան տերությունում, Վալախիայում, Ռուսաստանում և Եվրոպական որոշ այլ երկրներում [1]:

<sup>9</sup> Նիզովոյ նավակայանը («Низовая пристань») Կասպից ծովի ափին էր՝ Դերբենդից հարավ-արևմուտք, այժմ՝ Ադրբեջանի Հանրապետության Նիյագորա բնակավայրը: 1722-1735 թթ. գրավված էր ռուսական զորաբանակի կողմից:

<sup>10</sup> Նույն վավերագրի հենց այս հատվածում АРО-II-ում թույլ է տրվել լուրջ վրիպակ. «И как патриарх умер, тамошние обыватели без начальника и» բառերի փոխարեն տպագրվել են իմաստի հետ բացարձակապես կապ չունեցող և, ըստ երևույթին, ինչ-որ այլ տեղից ներմուծված բառեր՝ «И по милосердному милостивому обнадеживанию блаженные и», սպա նույնը՝ «доброе предводителя остались...» [10, վավ. 380, էջ 328]:

կանները, հատկապես բարձր պաշտոններ գրադեցնողները՝ կաթողիկոսներ, արքեպիսկոպոսներ, եպիսկոպոսներ կամ վարդապետներ, ինքնասպանություն գործեին:

Իսկ Եսայի Հասան-Ջալալյանի ինքնասպանության մասին անհերթելի թեզը, վատահարար, առաջացել է 1736 թ. մարտին Մինաս վարդապետի՝ ռուսաց կառավարությանը ներկայացրած զեկուցման հետևյալ հատվածներից. «...межд[о]усобную брань учинили и на его, патриарха, вознегодовали... причем оной патриарх от возимеющих[ся] ему великих оскорблений и печалей бедственнее *живот свой окончал*»; «между собою кололись те военные служители, и видя оной патриарх между ими немалое смятение и предание, *живот свой безвременно окончал*» [10, վավ. 380, § 13, 15, էջ 327-328]: Գրեթե անկասկած, հենց այս հաղորդումներն են սխալ ընկալվել՝ դառնալով թյուրիմացության պատճառ: Այնինչ «живот свой окончал/скончал» (որտեղ «живот»-ը «կյանքն» է) արտահայտությունը հին ռուսերենում նշանակում է «կնքեց իր մահկանացուն», «մահացավ»<sup>11</sup>, բայց ոչ երբեք՝ «ինքնասպանություն գործեց»: Օրինակ, 1706 թ. Պետրոս Ա-ն այսպես էր գովարանում ծովային մարտում ընկած իր մի հրամանատարին. «...о чудном и никогда неслыханном морском партикулярном бою... которой учинил господин Шцепотев, и сею *неслыханною славою живот свой окончал*» [14, էջ 60]: Հասկանալի է, որ ընդգծված հատվածում խոսքը ոչ թե Ծչեպոտևի «չլաված փառքով ինքնասպանություն գործելու», այլ «քաջարար զոհվելու» մասին է:

1732 թվականին գրված մեկ այլ վավերագրում հեղինակը նույն բառերով խոսում է իր եղբոր՝ «Աստծո կամոք» մահանալու մասին. «Потом в скорое и он, брат мой, *волею Божию живот свой скончал*» [16, էջ 59]: Արդարև, քրիստոնեական վարդապետության համաձայն, «Աստծո կամքով» մարդիկ մահանում են, բայց ոչ երբեք՝ ինքնասպան լինում:

Այսպիսով, Եսայի Հասան-Ջալալյանի ինքնասպանության մասին թեզը նույնպես անհիմն է և մտացածին:

#### Օգտագործված գրականության ցանկ

1. **Այվազյան Ա.** Հայկական հետախուզության գաղտնի գործողությունները 1720-ական թթ. (III) / **Այվազյան Ա.** Тайные операции армянской разведки в 1720-х гг. (III). // «Հայաստանի գրուցակից» - «Собеседник Армении», #5 (214), 10 փետրվարի, 2012 թ. (հայերեն և ռուսերեն):
2. **Այվազյան Արմեն.** Արևելահայության ժողովրդագրությունը XVII-XVIII դարերում և հայոց զորքի

- թվակազմը 1720-ական թվականներին: – Երևան. «ՆՏ Հոդվից», 2022:
3. **Արզումանյան Չավեն.** Եսայի Հասան Ջալալյանի քաղաքական գործունեության գնահատման հարցի շուրջ. // «Արարեր հասարակական գիտությունների», 1979, № 5, էջ 50-57:
  4. «Հայ ժողովրդի պատմություն»: Հ. IV. «Հայ ժողովուրդը ֆեոդալիզմի վայրէջքի ժամանակաշրջանում ԺՂ-ԺԸ դդ.»։ Պատ. խմբ.՝ Խաչիկյան Լ. Ս.: – Երևան. ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1972:
  5. **Չոբանյան Պավել.** Եսայի Հասան-Ջալալյան. // «Քրիստոնյա Հայաստանի հանրագիտարան»: – Երևան, 2002, էջ 316-317.
  6. **Պողոսյան Ֆրունզե.** Էջմիածնի կաթողիկոսությունը և հայ-ռուսական հարաբերությունները XVIII դ. առաջին քառորդում. // «Արարեր հասարակական գիտությունների», 1977, № 4, էջ 24-36:
  7. **АВПР,** Фонд Сношения России с Персией, опись I, 1728 г., д. 6, лл. 1056-106а (АВПР = Архив внешней политики России, шифр АВПРИ = Архив внешней политики Российской Империи МИД РФ).
  8. Армянское войско в XVIII веке. Из истории армяно-русского военного содружества (исследование и документы). Подготовил к изданию А. Н. Хачатрян. – Ер.: Изд-во АН Арм. ССР, 1968.
  9. **АРО-I** = Армяно-русские отношения в первой трети XVIII века. Сборник документов, т. II, часть I, под ред. Аш. Иоаннисяна. – Ер.: Изд. АН Арм. ССР, 1964.
  10. **АРО-II** = Армяно-русские отношения в первой трети XVIII века. Сборник документов, т. II, часть II, под ред. Аш. Иоаннисяна. – Ереван: Изд. АН Арм. ССР, 1967.
  11. **АРО-III** = Армяно-русские отношения во втором тридцатилетии XVIII века. Сборник документов, т. III, под ред. В. К. Восканяна. – Ер.: Изд. АН Арм. ССР, 1978.
  12. **АРО-IV** = Армяно-русские отношения в XVIII веке (1760-1800 гг.). Сборник документов, т. IV, под ред. – М. Г. Нерсисяна. – Ер.: Изд. АН Арм. ССР, 1990.
  13. **Арутюнян П. Т.** Освободительное движение армянского народа в I-ой четверти XVIII века. – Москва: Изд-во АН СССР, 1954.
  14. **Кротов П.А., Акишин М.О.** Вице-адмирал Н.А. Сенявин (1681–1738). Отв. ред. Н.В. Кирющенко. – СПб.: Историческая иллюстрация, 2022.
  15. «Словарь русского языка XVIII века». АН СССР. Ин-т рус. яз.; Гл. ред.: Ю. С. Сорокин. Вып. 7 (Древо — Залежь). – СПб.: «Наука», 1992.
  16. Труды Полтавской Ученой Архивной Комиссии. Под ред. И. Ф. Павловского, А. Ф. Мальцева, Л. В. Падалки и В. А. Пархоменко. Вып. седьмой. Полтава: Электр. типография Г. И. Маркевича. 1910.
  17. **Эзов Г. А.** Сношения Петра Великого с армянским народом. Документы, извлеченные из Московского главного и С.-Петербургского архивов Министерства Иностранных Дел... и других учреждений. – СПб.: Типография Импер. АН, 1898.

Сдана/Հանձնվել է՝ 09.04.2025

Рецензирована/Գրախոսվել է՝ 14.04.2025

Принята/Ընդունվել է՝ 19.04.20

<sup>11</sup> XVIII դարի ռուսաց լեզվի բառարանում գրված է. «Кончить, скончать, предать, потерять... живот, лишиться, отстать живота, класть живот за кого-что = *Умереть*» [15].